

անունն ալ կապուած է հայկական դատի ու պրոպագանդի հետ:

\* \* \*

Սոշոյ դէմքերու շարքը կը նօսրանայ Եւրոպայի մէջ եւ անգամ Ֆրանսան կը պարպուի իր մեծ մարդիկներէն: Կ'ըսեմ — «անգամ»: Վասնզի այս երկիրն է, որ հակառակ իր սահմանափակ բնակչութեան, տուեր է մինչեւ օրս մեծագոյն տոկոսը աշխարհահռչակ դէմքերու: Պօսքս պետական, քաղաքական գործիչներու մասին է:

Ուշագրաւ երեւոյթ մըն է այս: Անտարա-կոյս, անոր գլխաւոր պատճառներէն մէկը կուսակցութիւններու բուն պայքարն ու բախումներն են՝ քաղաքական լայնարձակ ազատութիւններուն մէջ: Եթէ ատոնց հեռաւոր պատճառներն ալ փնտելու լինինք, պիտի յանդիմանք, հաւանականօրէն, ցեղային ու պատմական ազդակներուն: Միջկուսակցային պայքարներն ու բախումները, անգամ իրենց անխուսափելի ծայրայեղութիւններով, միանգամայն վնասակար երեւոյթ մը չեն, ինչպէս կը խորհին տգէտները. եւ իրաւացի է գերման իմաստութիւնը, երբ կ'ըսէ թէ «առանց կուսակցութեան չկայ յառաջադիմութիւն»: Պօսքս, հարկաւ, լուրջ, օրինաւոր կուսակցութիւններու մասին է, որոնք ունին ուրոյն ծրագիր ու աշխարհահայեացք, ունին գետին ու գոյութեան իրաւունք իրենց ազգային իրականութեան մէջ եւ կը լրացնեն պահանջ մը եւ կը ցուցնեն այդ ծրագրին ու աշխարհահայեացքին համապատասխան գո'րծ մը: Այլապէս՝ քայ-ֆաներ են, որոնք զիրար կը լափեն, հարուածելով ազգային դատը, ինչպէս կարգ մը խմբակցութիւններ բուլղար-մակեդոնացիներու եւ հայերու մէջ:

Ճշմարիտ կուսակցութիւնները կը պայքարին օրինաւոր գէնքերով, բացձակատ, շիտակօրէն — եւ այդ պայմանով միայն պայքարը կը հանդիսանայ որպէս դրական, շինարար ազդակ մը, ազգային յառաջադիմութեան ազդակ մը: Այդ պայմանով միայն նա ստեղծագործող է եւ ոչ քանդիչ, պառակտիչ: Եւ պայքարի յաւերժական քուրային մէջ, ուր պարագլուխներն ու շարքային գործիչները փոխադարձաբար հարուած կուտան ու կը ստանան —

կը դարձնուին բնաւորութիւնները, յառաջ կուգան գաղափարի ըմբիշներ, ազգային ու համամարդկային մեծ դատերու յառաջամարտիկներ...

Բնականաբար, այդ բոլորը հնարաւոր է միմիայն ազատ քաղաքական կարգերու մէջ, ուր կը տիրէ խօսքի, խղճի, մամուլի ու հաւաքումներու ազատութիւն: Բննապետութեան եւ ստրկութեան ոչ ժիմի տակ սակաւաթիւ են քաղաքական գործիչները, հազուադիւրս են մեծ դէմքերը: Հարիւր միլիոնաւոր ժողովուրդ ունեցող Ռուսաստանը մինչեւ օրս տուեր է միայն մէկ հատիկ փորձառու, պետական մարդ, զիտական լայն պատրաստութեամբ եւ եւրոպական հռչակով — Միլիկով մը:

Կիսաւատական Գերմանիան հակառակ իր մշակած փառահեղ զիտութեան ու փիլիսոփայութեան, ամբողջ ութսուն տարուան ընթացքին հազիւ արտադրեր է քանի մը խոշոր քաղաքական դէմքեր, որոնցմէ խոշորագոյններն են Բիսմարկ, Բէթհլ, Լասսալ (Ստրեզմանն մեծ յոյսեր տուաւ, տարաբախտաբար, ժամանակ չունեցաւ զարգանալու):

Հապա տեսէք Ֆրանսայի պետական մեծ դէմքերու քարտէսը, վերջին վաթսուն տարուան ընթացքին, Ֆրանս-պրուսական պատերազմէն ի վեր. Կլէմանսօ, Գամբետտա, Վալդեֆ-Ռուսսօ, Լէօն Բուրժուա, Պուանքարէ, Բրիսսօն, Դէչանեւ, Դէլկասէ, կոմս դը Մեօն, Կասանեակ, Կոմբ, Ժօնէս, Բրիան, Վիլիամի եւային: Աւելի երիտասարդներուն մէջ՝ արդէն համբաւաւոր են Տարդիօ, Հերրիօ, Պօլ Բօնկուր եւ ուրիշներ:

Քիչե՛ր մնացեր են խոշորներու ընդէն — միայն Պուանքարէ եւ Բրիան: Եւ քանի մը օր առաջ հողին յանձնեցին բուն իսկ նահապետը, Երրորդ Հանրապետութեան ամենէն վաստակաւոր, ամենէն կարող ու ինքնատիպ ռահվիրաներէն — Ժօրժ Կլէմանսօ:

Յեղափոխական մը եղաւ ամբողջ կեանքը, աւելի քան 60 տարուան արկածայից գործունէութեան ընթացքին: Յեղափոխական մը՝ որ երկու տիրական դաղափար ունեցաւ, երկու սփշտամունք — հայրենիքի սէր եւ Ազատութեան սէր:

Թերեւս հարկ էր աւելացնել երրորդ պաշ-